

Թարգմանիչ՝ Էմմա Քեղիշանյան



Յունուս - 2016



Այս գրքում ընդգրկված է քսանհինգ հեքիաթ, որոնք ընտրվել են «Քալիլա և Դիմնա» վերնագրով գրքից, վերաշարադրվել պարզ ու հասկանալի լեզվով: «Քալիլա և Դիմնա» հանրահայտ գիրքը գրվել է շուրջ երկու հազար տարի առաջ, սանսկրիտ-երևնով (հին հնդկերեն): Իրանի հայտնի թագավոր Անուշիրվանի օրոք թարգմանվել է պահլավերեն, իսկ շատ ժամանակ անց՝ պահլավերենից արաբերեն: Շուրջ հինգ հարյուր տարի հետո թարգմանվել է նաև պարսկերեն:

Պարսկերեն թարգմանվել է յոթ հարյուր տարի առաջ և ծավալով տասն անգամ ավելի մեծ է այս գրքից: Մակաֆն «Քալիլա և Դիմնայի» լեզուն էլ, ինչպես այլ հին գրքերինը, թեև շատ գեղեցիկ գրական է, բայց, քանի որ արաբերենն թափոխ շատ կան, երեխաների համար դժվար հասկանալի է: Միայն ավագ դպրոց ավարտելուց հետո այն կարելի է կարդալ ու հասկանալ:

Հեքիաթները գրելիս հեղինակի նպատակը, բարոյական կանոնները, կյանքի գաղտնիքները դրանցում գետնդնն ու ուսուցանելն է եղել, որպեսզի ընթերցելով՝ հաճույքից բացի, նաև սովորեն այդ դրական բաները: Հեքիաթների գերակշռող մասը կենդանիների լեզվով է գրված: Քալիլան և Դիմնան



Արցի
բարեկամություն


Ճաշից հետո էլ ձերունին մի ծափ տակ քնում էր, իսկ արջը թաշկինակը վերցնում, ճանձնրին էր բշում, որ չնստեն նրա դեմքին:

Էդպես օրեր անցան: Մի օր էլ սովորականի պես ձերունին քնած էր ծափ տակ, իսկ հավատարիմ արջը ճանձնրն էր բշում: Ճանձնրը շատ էին, 19վել էին ձերունու դեմքին: Մի քանիսն էլ շատ պնդաձակատ էին, ոչ մի կերպ ձերունու շուրթերից, քերանից չէին հեռանում: Այգևպանը հանգիստ չէր կանողանում քնել, քնի մեջ շարունակ գլուխը շարժում էր, ճանձնրին հնոացնում: Բայց էդ աներեսները ձեռ չէին քաշում, աստիճանաբար զայրացնում էին արջին: Նրա դուրը չէր գալիս, որ չեն թողնում ընկերը քնի, թաշկինակին էլ քանի տեղ չեն դնում:

Ի վերջո, արջն ինչ-որ մի ելք մտածեց. «Նս ինչ կամակոր, մարդկանց հանգիստ չտվող ճանձնր են: Սպասեք, հիմա կնպխի սև բերեմ ձեր գլխին, որ այլևս իմ սիրելի, բարի ընկերոջը, տիրոջը չտանջեք»:

Նա այգու անկունում ընկած տասը մանանոց քարը վերցրեց, բարձրացրեց գլխավերևն ու, թիրախ դարձնելով ձերունու դեմքի ճանձնրին, հարվածեց ողջ ուժգնությամբ:

Իհարկե, ճանձնրը փախան: Մակայն ձերունին էլ կյանքից գրկվեց՝ հանուն արջի հետ թարեկամության: Անշուշտ, արջը ցանկանում էր ծառայություն մատուցել ընկերոջը: Բայց, տգիտության պատճառով, լավություն անելու ցանկությամբ սպանեց նրան: Այդ օրվանից տղետ, անհասկացող մարդկանց հետ ընկերություն անելու համար հանրահայտ ասույթ է դարձել. «Այսինչի ընկերությունը արջի ծառայություն է» խոսքը:



Sivunhi huuli
äläste



ի որսորդական բազնի նետահարեցին: Կարճ թռչելուց հետո նա վայր ընկավ. տնքում, հեծնում էր: Էդ մոտակայքում տնային մի հավ կուտ էր ուտում: Երբ լսեց բազնի տնքոցը, մոտեցավ ու ասաց.

-Ասոված մի արասցե, հո վատ բան չի պատահել: Ինչ որ բանով կարճո՞ղ եմ օգտակար լինել, ասա, պատրաստ եմ ծառայել:

-Անզամ եթե մի բան էլ կարողանաս անել, չեմ ցանկանում, հեռացիր: Ես ու դու երբեք չենք կարող միմյանց հանդուրժել, դու ինձ բոլորովին դուր չես գալիս:

-Խնդրում եմ, էդքան անգուր մի եղիր: Ես քեզ ինչ վատություն եմ արել, որ ատում ես ինձ:

-Քո թերությունն էն է, որ ապերախտ ես, վեհանձնությունից ու հավատարմությունից շատ հեռու: Իսկ ես շատ մեծահոգի ու հպարտ եմ: Դավաճանների հետ ծանոթանալն ամորսար է ինձ համար,-պատասխանեց բազնն:

-Տեսի՛ն հավը շատ զարմացավ էդ խոսքերից.

-Ինչու՞ ես ինձ վիրավորում: Իմ դավաճանությունն ապացուցելու ինչ փաստեր ունես, որ էդպես վատ կարծիքի ես: Ինչու՞ ես չհիմնավորված բաներ ասում: Մինչդեռ ես տեսի՛ն կենդանի եմ, իսկ դու՞ վայրի:

-Քո դավաճանության ապացույցներից մեկն էն է, որ մարդիկ քեզ շատ լավ են վերաբերվում ու բարյացակամ են: Քեզ կուտ ու ջուր, տեղ ու բուն են տալիս, օր ու գիշեր սնուցում, դաստիարակում: Մի խոսքով դու մարդկանց գթասրտության ու սիրալիրության քաղաքան մեծ պաշար ունես քո հանդեպ: Այսուհանդերձ, երբ ուզում են քեզ մորթել, փախչում ես, որովհետև ապերախտ ես ու վախենում ես տիրոջից: Մինչդեռ մենք՝ բազեններս, չնայած վայրի ենք, բայց հենց մի քանի օր մեկի

